ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» հոկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ԱՑ-ԳԲԽ-76/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.10.2016թ. թիվ 1/73-3/23060-16 գրությամբ ներկայացված «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00451426) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.06.2016թ. թիվ 08-198 գրության հիման վրա, 24.06.2016թ. թիվ 1/73-1/17114-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝

Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 30.09.2016թ. թիվ 01/04.1/3611-16 գրությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ գործում առկա չէ որևէ ապացույց «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի կողմից «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2016թ. թիվ 1/73-1/17114-16 գրությամբ ներկայացված «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.10.2016թ. թիվ 1/73-1/23060-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Կենտրոնը 29.06.2016թ. թիվ 01/04.1/2539-16 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ին:

«Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ն 12.07.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ն:

«Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ն հայտնել է, որ հետևողական լինելով սույն Ընթացակարգին, էլեկտրոնային փոստով որևէ ծանուցում կամ փաստաթուղթ չի ստացել

Պատվիրատուի կողմից՝ համապատասխան որակավորման փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ, ուստի տեղի ունեցած թյուրիմացության պատճառով չի ներկայացրել համապատասխան պահանջվող փաստաթղթերը: Հետևաբար խնդրել է հաշվի առնել նշված հանգամանքները և փաստաթղթեր չներկայացնելը համարել թյուրիմացություն, այլ ոչ թե գնումների գործընթացի հաջորդ փուլին մասնակցելուց խուսափում:

3. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն 22.06.2016թ. թիվ 08-198 գրությամբ ներկայացրել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Կենտրոնը 21.07.2016թ. Պատվիրատուին է ներկայացրել «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի 18.07.2016թ. գրության պատճենը:

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն 22.07.2016թ. թիվ 08-237 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կայացրած որոշումների վերաբերյալ ծանուցել է Ընթացակարգին մասնակցած բոլոր մասնակիցներին և Պատվիրատուի gnumner@nmmc.am էլեկտրոնային փոստին որևէ հետադարձ նամակ (ներառյալ SPAM, ընդ որում SPAM նամակներ չեն կարող ստացվել, քանի որ առկա չէ Պատվիրատուի կողմից կատարված նման գրառում) չի ստացվել, որը կապացուցեր «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի pharmg@netsys.am էլեկտրոնային փոստին Պատվիրատուի gnumner@nmmc.am էլեկտրոնային փոստից ուղարկված նամակը ստանալը կամ չստանալը:

4. ՍՑ-ԳԲԽ-76/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 04.10.2016թ. N 1/73-1/23060-16 գրությամբ ներկայացված «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական

ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

- 10.06.2016թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 4 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 10-րդ, 48-րդ, 68-րդ, և 69-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ն:
- 17.06.2016թ. ժամը 12:00-ին նիստի N 5 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով, ինչպես նաև հրավերի 4.3-րդ կետի զ) ենթակետով նախատեսված փաստաթղթերը սահմանված կարգով և ժամկետում «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ն չի ներկայացրել:

3. Կենտրոնը 30.09.2016թ. թիվ 01/04.1/3611-16 գրությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ գործում առկա չէ որևէ ապացույց «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի կողմից «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ. թիվ 1/73-1/17114-16 գրությամբ ներկայացված «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

4. Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.10.2016թ. թիվ 1/73-1/23060-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. Նախարարությունը միաժամանակ տեղեկացրել է, որ չլիազորված /SPAM/ որակված հաղորդագրությունները Ընկերությանը հասանելի լինելու դեպքում վերջինս համարվում է ծանուցված, և տվյալ դեպքում Ընկերությունը չներկայացնելով պահանջվող փաստաթղթերը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ա) ենթակետով նախատեսված խախտում:

6. Ի պատասխան Կենտրոնի 01.08.2016թ. թիվ 01/04.1/2927-16 գրության՝ «Նետսիս» ՀՁ ՍՊԸ-ն 09.08.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Պատվիրատուի՝ gnumner@nmmc.am, էլեկտրոնային հասցեից «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի՝ pharmg@netsys.am, էլեկտրոնային հասցեին 2016թ. հունիսի 13-ից 17-ը ընկած ժամանակահատվածում ոչ մի հաղորդագրություն չի ստացվել:

5. ՍՑ-ԳԲԽ-76/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2016թ. թիվ 1/73-1/17114-16 և 04.10.2016թ. թիվ 1/73-1/23060-16 գրությունները, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 22.06.2016թ. թիվ 08-198 և 22.07.2016թ. թիվ 08-237 գրությունները և կից փաստաթղթերը, «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի 12.07.2016թ., 18.07.2016թ. և «Նետսիս ՀՁ» ՍՊԸ-ի 09.08.2016թ. Կենտրոնին ուղղված գրությունները, հայտնում է հետևյալը.

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

- 10.06.2016թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 4 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 10-րդ, 48-րդ, 68-րդ, և 69-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ն:
- 17.06.2016թ. ժամը 12:00-ին նիստի N 5 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ

հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով, ինչպես նաև հրավերի 4.3-րդ կետի զ) ենթակետով նախատեսված փաստաթղթերը սահմանված կարգով և ժամկետում «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ն չի ներկայացրել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Կենտրոնը 30.09.2016թ. թիվ 01/04.1/3611-16 գրությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում Նախարարությանը ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է, որ գործում առկա չէ որևէ ապացույց «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի կողմից «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու վերաբերյալ, ուստի Կենտրոնը գտել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2016թ. թիվ 1/73-1/17114-16 գրությամբ ներկայացված «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.10.2016թ. թիվ 1/73-1/23060-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Նախարարությունը միաժամանակ տեղեկացրել է, որ չլիազորված /SPAM/ որակված հաղորդագրությունները Ընկերությանը հասանելի լինելու դեպքում վերջինս համարվում է ծանուցված, և տվյալ դեպքում Ընկերությունը չներկայացնելով պահանջվող փաստաթղթերը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ա) ենթակետով նախատեսված խախտում:

Ընկերությունը 12.07.2016թ. գրությամբ հայտնել է Կենտրոնին, որ հետևողական լինելով սույն Ընթացակարգին, էլեկտրոնային փոստով որևէ ծանուցում կամ փաստաթուղթ չի ստացել Պատվիրատուի կողմից՝ համապատասխան որակավորման փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ, ուստի տեղի ունեցած թյուրիմացության պատճառով չի ներկայացրել համապատասխան պահանջվող փաստաթղթերը: Հետևաբար խնդրել է հաշվի առնել նշված հանգամանքները և փաստաթղթեր

չներկայացնելը համարել թյուրիմացություն, այլ ոչ թե գնումների գործընթացի հաջորդ փուլին մասնակցելուց խուսափում:

Ի լրումն վերոհիշյալ գրության՝ 18.07.2016թ. Ընկերությունը Կենտրոնին է ներկայացրել Ընկերության էլեկտրոնային հասցեն սպասարկող «Նետսիս ՀՁ» ՍՊԸ-ի գրությունը՝ առդիր քաղվածքով, համաձայն որի Պատվիրատուի՝ ***gnumner@nmmc.am,*** էլեկտրոնային հասցեից «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի՝ pharmg@netsys.am, էլեկտրոնային հասցեին 2016թ. հունիսի 13-ից 17-ը ընկած ժամանակահատվածում ոչ մի հաղորդագրություն չի ստացվել:

Կենտրոնը 01.08.2016թ. 01/04.1/2927-16 գրությամբ դիմել է «Նետսիս» ՀՁ ՍՊԸ-ին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն, «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին՝ pharmg@netsys.am, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստից՝ gnumner@nmmc.am, 13.06.2016թ. և 17.06.2016թ. ծանուցումներ ստացվել են, թե ոչ:

Ի պատասխան Կենտրոնի 01.08.2016թ. թիվ 01/04.1/2927-16 գրության՝ «Նետսիս» ՀՁ ՍՊԸ-ն 09.08.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Պատվիրատուի՝ gnumner@nmmc.am, էլեկտրոնային հասցեից «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ի՝ pharmg@netsys.am, էլեկտրոնային հասցեին 2016թ. հունիսի 13-ից 17-ը ընկած ժամանակահատվածում ոչ մի հաղորդագրություն չի ստացվել:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը արձանագրում է «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ն «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակում ստանձնած պարտավորություն չի խախտել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 04.10.2016թ. թիվ 1/73-1/23060-16 գրությամբ ներկայացված «Ֆարմա-Սթար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00451426) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-76/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Գևորգյան